ԹՔԵԼ ԵՆՔ ԲՈԼՈՐՍ

Bookmark

Մարկ Մենսոն

ԹՔԵԼ ԵՆՔ ԲՈԼՈՐՍ

ՀՈՒՅՍԸ ՉԿՈՐՑՆԵԼՈՒ ՆՈՒՐԲ ԱՐՎԵՍՏԸ

Թարգմանությունն անգլերենից՝
Սերգեյ Սարգսյանի և Նարեկ Մարգարյանի

ԵՐԵՎԱՆ
2020

Bookmark

Mark Manson

EVERYTHING IS F*CKED

A BOOK ABOUT HOPE

Bookmark

Բովանդակություն

Մաս I Հույս 10

Գլուխ 1 Անհարմար ճշմարտություն 11

Գլուխ 2 Ինքնատիրապետումը պատրանք է 34

Գլուխ 3 Նյուտոնի էմոցիայի օրենքը 68

Գլուխ 4 Ինչպես իրականացնել բոլոր երազանքները 102

Գլուխ 5 Հույսը քաքմեջ է եղել 143

Մաս II Թքել ենք բոլորս 173

Գլուխ 6 Մարդկայնության բանաձևը 175

Գլուխ 7 Ցավը տիեզերական կոնստանտ է 207

Գլուխ 8 Զգացմունքների տնտեսությունը 245

Գլուխ 9 Վերջին կրոնը 276

Երախտագիտության խոսք 300

Հղումներ 303

Bookmark

ՄԱՍ I

Հույս

ՀՏԴ 159.9
ԳՄԴ 88
Մ 610

Մենսոն Մարկ
Մ 610 Թքել ենք բոլորս: Հույսը չկորցնելու նուրբ արվեստը/ Մ. Մենսոն; Թարգմանությունն անգլերենից՝ Ս. Սարգսյանի և Ն. Մարգարյանի.- Եր.: Newmag, 2020.- 336 էջ:

Մենք ապրում ենք հետաքրքիր ժամանակներում, երբ ամեն ինչ հրաշալի է: Մարդիկ ավելի ազատ են, ավելի առողջ և հարուստ, քան իրենցից առաջ՝ մարդկության պատմության բոլոր փուլերում: Բայց թվում է, թե ամեն ինչ անդառնալիորեն վատացել է՝ մոլորակը տաքանում է, կառավարությունները տապալվում են, տնտեսությունը՝ քանդվում, բոլորը Twitter-ում նեղսրտում են: Պատմության այս ժամանակահատվածում, երբ ունենք տեխնոլոգիաներ, կրթություն, հաղորդակցություն, որոնց մասին մեր նախնիները կարող էին միայն երազել, մեկ է, շատերը շարունակում են անհույս վիճակում մնալ:

Ի՞նչ է կատարվում: Միայն մի մարդ է կարող մի բառով նկարագրել այս ամենը՝ Մարկ Մենսոնը: Նա 2016-ին հրատարակեց «Թքած ունենալու նուրբ արվեստը» գիրքը, որը փայլուն նկարագրեց այն մտահոգությունները, որոնք ներթափանցում են մեր կյանք: Նա ցույց տվեց, որ տեխնոլոգիաների պատճառով տարածվել է այն մեծագույն սխալը, թե աշխարհը մեզ պարտական է: Մեր մշակույթն էլ է մեզ համոզել դրանում: Եվ ամենավատն այն է, որ երջանկության հասնելու անհագ ծարավն իրականում մեզ ավելի դժբախտ է դարձրել: Եվ այդ ամենի «նուրբ արվեստը» դարձավ մարտահրավեր. ընտրիր տառապանքդ, որպեսզի կենտրոնանաս ու գտնես այն ցավը, որին ուզում ես դիմակայել: Ու գրվեց մի գիրք, որը դարձավ միջազգային ֆենոմեն, վաճառվեց միլիոնավոր օրինակներով ու 13 երկրում դարձավ № 1 բեսթսելլերը:

Իր նոր գրքով Մենսոնն անխուսափելի սխալներից անցում է կատարում իրար հաջորդող պատուհաններին: Սուզվելով հոգեբանական հետազոտությունների ավազանը, ուսումնասիրելով իմաստուններին՝ Պլատոն, Նիցշե և Թոմ Ուեյթ, նա քանդուքարափ է անում կրոնն ու քաղաքականությունը, այն ուղիները, որոնք այդ երկուսը միանման են դարձնում: Նա ուսումնասիրում է փողի հետ մեր հարաբերությունները, ժամանցը, համացանցը: Պարզում է, թե ինչպես կարող է որևէ բանի չարաշահումը մեզ ողջ-ողջ կուլ տալ: Նա տալիս է հավատի, երջանկության, ազատության բացատրությունները:

ՀՏԴ 159.9
ԳՄԴ 88

ISBN 978-9939-9217-5-4
Թքել ենք բոլորս. հույսը չկորցնելու նուրբ արվեստը © 2020, «Նյու Մեգ» ՍՊԸ
Everything Is F*cked: A Book About Hope © 2019 by Mark Manson. All rights reserved

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել «Foundry Literary + Media» գործակալության միջոցով:

Գլուխ 1

Անհարմար ճշմարտություն

Եվրոպայի կենտրոնում, աչքից հեռու մի կտոր հողի վրա, սև, մութ ամպեր էին կուտակվել: Նախկին զորանոցներում ու զինանոցներում ծնունդ էր առել մի այնպիսի չարիք, որպիսին աշխարհը դեռ չէր տեսել: Չորս տարվա ընթացքում այստեղ համակարգված պահեստավորում, ստրկացնում, տանջում և սպանում էին մարդկանց՝ ավելի քան 1.3 մլն հոգու: Եվ այդ ամենը՝ Մանհեթենի կենտրոնական զբոսայգու չափ տարածքում: Եվ ոչ ոք չէր փորձում դրա դեմն առնել:

Բացի մի հոգուց:

Իսկը հեքիաթի կամ կոմիքսի պատմություն. խրոխտ հերոսը մխրճվում է դժոխքի հրե խորխորատը՝ չարիքի դեմ մաքառելու համար: Հաջողելու ոչ մի շանս: Սթափ բանականությունը մի կողմ է քաշվել: Բայց մեր հերոսը չի ընկրկում և աչքն անգամ չի թարթում: Նա խիզախորեն մարտի է նետվում և տապալում է հրեշին, կոտորում չար ուժերին՝ անգութ զավթիչներին, փրկում ամբողջ մոլորակը և նույնիսկ գուցե մի-երկու արքայադստեր:

Եվ մի որոշ ժամանակ մարդիկ հուսավառվում են:

Սակայն սա հույսի պատմություն չէ: Ես պատմելու եմ, թե ինչպես ենք խրվել համապարփակ քաքի մեջ: Ոչ մի հույս.

համատարած ու լիակատար քաքմեջ: Այնքան գարշելի, որ նույնիսկ չես էլ պատկերացնի, եթե ընկղմված ես քո փափուկ պլեդի մեջ ու վայելում ես քո ձրի Wi-Fi-ը:

Վիտոլդ Պիլեցկին արդեն պատերազմի հերոս էր, երբ որոշեց ներթափանցել Օսվենցիմ: Երիտասարդ տարիքում բազմաթիվ մեդալներ էր ստացել 1918-ի լեհ-սովետական պատերազմի ժամանակ: Նա կոմունիստների պորտը տեղը դրեց ավելի շուտ, քան ամերիկացիները կլսեին «վարդագույն պրոկոմունիստ վիժվածքների»* մասին: Պատերազմից հետո Պիլեցկին տեղափոխվեց Լեհաստան, գյուղում ամուսնացավ ուսուցչուհու հետ և երկու երեխայի հայր դարձավ: Նա կյանքը անհոգ վայելում էր ձի քշելով և սիգար ծխելով: Ամեն բան հեշտ էր ու պարզ:

Հետո հայտնվեց Հիտլերը, և լեհերը չհասցրին էլ սապոգները հագնել, երբ նացիստները բլիցկրիգով վերցրին իրենց երկրի կեսը: Լեհաստանն իր ամբողջ տարածքը կորցրեց գրեթե մի ամսում: Անհավասար կռիվ էր. նացիստները ներխուժեցին ձախից, Սովետը՝ աջից: Կարելի է ասել՝ երկիրը հայտնվեց երկու քարի արանքում: Մեկը զանգվածային ոճրագործությամբ տարված և սեփական անձի մեծությամբ տառապող մոլագար էր, որը փորձում էր նվաճել աշխարհը, մյուսը՝ խելահեղ և անիմաստ ցեղասպան: Մինչև հիմա վըստահ չեմ՝ որը որն էր:

Սկզբում Սովետը նացիստներից շատ ավելի դաժան էր: Սովետն արդեն լավ գիտեր, թե ոնց է պետք տապալել օտար

* ԱՄՆ-ում կոմունիստների համակիրներին 1925-ին տրված բնորոշումը (ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

երկրի կառավարությունը և իր կեղծ գաղափարախոսությունը փաթաթել բնակիչների վզին: Կայսերատենչության առումով նացիստները դեռ կույս էին (Հիտլերի բեղիկը վկա): Որոշ տվյալներով՝ այդ պատերազմի առաջին ամիսներին կոմունիստները Լեհաստանի մեկ միլիոն քաղաքացու հավաքեցին և քշեցին արևելք: Կարո՞ղ եք պատկերացնել՝ մեկ միլիոն մարդ անէացավ ընդամենը մի քանի ամսում: Ոմանք հասան Սիբիրի գուլագները, մյուսներին տասնամյակներ անց գտան գերեզմանոցներում: Շատերը մինչև օրս համարվում են անհետ կորած:

Պիլեցկին այդ ժամանակ կռվում էր և՛ գերմանացիների դեմ, և՛ կոմունիստների: Պարտությունից հետո նա և իր լեհ զինակիցներն ընդհատակյա դիմադրություն սկսեցին Վարշավայում: Նրանք գործում էին «Գաղտնի լեհական բանակ» անվան տակ:

Գաղտնի լեհական բանակը 1940-ի գարնանը պարզեց, որ գերմանացիները բանտային մեծ համալիր են կառուցել երկրի հարավում: Գերմանացիներն այն անվանեցին Օսվենցիմ: 1940-ի ամռանը Լեհաստանի արևմուտքում հազարավոր մարդիկ սկսեցին անհետանալ՝ բարձրաստիճան զինվորականներ և ազգային առաջնորդներ:

Դիմադրության մարտիկների մտավախությունն այն էր, որ գերմանացիները նույնպես առել էին երկրի արևելքում ծավալված զանգվածային ձերբակալությունների համը: Պիլեցկին և նրա զինակիցները գլխի էին ընկնում, որ մի փոքր քաղաքի չափ տարածված Օսվենցիմը կապված էր մարդկանց անհետացման հետ, և գուցե այնտեղ արդեն պահվում էին հազարավոր լեհ զինվորներ:

Եվ ահա Պիլեցկին որոշեց ներթափանցել Օսվենցիմ: Ի

սկզբանե դա փրկչական առաքելություն էր. նա պետք է հանձնվեր և թույլ տար իրեն բանտարկել, հետո ներսից պետք է կազմակերպեր լեհ զինվորների հետ, ապստամբություն սկսեր և, ի վերջո, գերյալների հետ փախուստի դիմեր:

Ինքնասպանությանը մոտ ծրագիր էր: Նույն հաջողությամբ կարող էր հրամանատարին խնդրել, որ իրեն մի տակառ թույն տան խմելու: Վերադասը որոշեց, որ նա ցնորվել է և մերժեց պլանը:

Սակայն ամեն շաբաթ խնդիրն ավելի էր լրջանում. հազարավոր լեհ առաջնորդներ անհետանում էին, իսկ Օսվենցիմը շարունակում էր անտեսանելի մնալ դաշնակիցների հետախուզության համար: Դաշնակիցները գաղափար չունեին, թե ինչ է այնտեղ կատարվում, և ոչ էլ պատկերացնում էին, թե ինչ է հնարավոր անել: Ի վերջո, Պիլեցկու հրամանատարությունը տեղի տվեց: Մի օր, գերմանացիների ռեյդի ժամանակ, Պիլեցկին այնպես արեց, որ էսէսականներն իրեն ձերբակալեն պարեկային ժամը խախտելու համար: Եվ շուտով նա հայտնվեց Օսվենցիմում: Նա պատմությանը հայտնի միակ մարդն է, որն ինքնակամ գնացել է նացիստական համակենտրոնացման ճամբար:

Ճամբար մտնելուն պես նա հասկացավ, որ իրականությունը շատ ավելի վատն է, քան հնարավոր է պատկերացնել: Բանտարկյալներին սիստեմատիկ գնդակահարում էին, շարահրապարակում ամեն չնչին բանի համար սպանում էին. բավական էր տեղը փոխել շարքում կամ ոչ այնքան ձիգ կանգնել: Ֆիզիկական աշխատանքներն անողոք էին և անվերջ: Հյուծելու աստիճան լծում էին մարդկանց, հաճախ ստիպում անօգուտ գործ անել կամ անիմաստ հրամաններ կա-

տարել: Մի ամիս էլ չկար, որ Պիլեցկին ճամբարում էր, բայց նրա հետ նույն բարաքում եղած մարդկանց մեկ երրորդն արդեն ոչնչացվել էր. հյուծախտն էր տապալել մարդկանց, թոքաբորբը կամ պահնորդի փամփուշտը: Այդուամենայնիվ Պիլեցկին՝ այդ կոմիքսացու սուպերհերոս շան տղեն, 1940-ի վերջին սկսեց իր լրտեսական գործողությունը:

Վա՛յ, Պիլեցկի, վա՛յ, իսկական տիտան, անդունդի վրայով ճախրող հերոս: Ինչպե՞ս կարողացար հետախուզական ցանց ստեղծել՝ երկտողերը խցկելով լվացքի զամբյուղների մեջ: Ինչպե՞ս կարողացար ձեռքի տակ եղած երկաթի կտորներից և մարտկոցներից ռադիոհաղորդիչ սարքել (ճիշտ և ճիշտ ամերիկյան ՄակԳայվեր սուպերգործակալի կերպարի պես), համակենտրոնացման ճամբարի վրա հարձակվելու պլանն էլ փոխանցել Վարշավա՝ Գաղտնի լեհական բանակին: Գաղտնի օղակներ ստեղծեցիր, որոնք բանտարկյալների համար ուտելիք, դեղ և շոր հայթայթեցին՝ փրկելով անթիվ կյանքեր և հուսադրելով փրկության վերջին նշույլը կորցրած մարդկանց: Ինչպե՞ս: Ինչպե՞ս է աշխարհին արժանացել քեզ պես մարդ ունենալուն:

Պիլեցկին երկու տարում Օսվենցիմում դիմադրության մի ամբողջ ջոկատ ստեղծեց: Այն ուներ իր յուրահատուկ աստիճանակարգումը, լոգիստիկ ցանցը և արտաքին աշխարհի հետ կապը: Էսէսականները գրեթե երկու տարի ոչինչ չէին նկատում: Պիլեցկու նպատակն էր լայնածավալ ապստամբություն բարձրացնել ճամբարի ներսում: Նա հավատում էր, որ դրսի օգնության և համակարգված գործողությունների շնորհիվ կկարողանար գերիներին դրդել, որ փախչեն բանտից: Պետք էր ընդամենը հարձակվել փոքրա-